

ՀԻՊՐՈՒՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ,

ստորերկրյա ջրերի տեղադրման և տեղաբաշխման պայմաններն արտացոլող քարտեզներ: Հ. ք. տվյալներ են պարունակում ջրաբեր հորիզոնների որակի և արտադրողականության, ջրաճնշումային համակարգերի հին հիմքի չափերի, ձևի, դիրքի, ինչպես նաև երկրաբանական ստրուկտուրայի, ռելիեֆի և ստորերկրյա ջրերի փոխհարաբերության մասին: Կազմվում են ըստ *հիդրոերկրաբանական հանույթի* արդյունքների՝ հաշվի առնելով երկրաբանական և տեկտոնական քարտեզները: Հ. ք-ի վրա ցույց են տրվում տարբեր ջրաբեր հորիզոնների և նրանց համալիրների տեղաբաշխումը, աղբյուրները և նրանց դեբիտը, ջրհորները, հորատանցքերը, ջրաբեր հաստվածքի առաստաղը կամ հատակը, ստորերկրյա ջրերի տեղադրման խորությունը և քիմ. բաղադրությունը: Հ. ք. ուղեկցվում են կտրվածքներով, որոնց վրա տրվում է շրջանի երկրաբանական կառուցվածքը (ջրաբեր հորիզոնների լիթոլոգիական բաղադրությունը, ֆացիալ փոփոխությունները, ջրակայուն հաստվածքները, ջրաբեր հորիզոնների տեղադրման խորությունը և ճնշման մեծությունը, ստորերկրյա ջրերի հանքայնացումը և դեբի-

տը): Փոքր մասշտաբի Հ. ք-ի վրա (1:500000-ից փոքր) տրվում են տարածքի հիդրոերկրաբանական կառուցվածքի առավել կարևոր առանձնահատկությունները, հիդրոերկրաբանական ավազանների սահմանները, ստորերկրյա ջրերի սնման, ճնշման և բեռնաթափման մարզերը: Փոքր մասշտաբի Հ. ք. երբեմն կազմվում են գրականության և արխիվային տվյալներով, առանց հիդրոերկրաբանական հանույթի: Միջին մասշտաբի Հ. ք. լրացուցիչ պարունակում են քանակական ցուցանիշներ, որոնք բնութագրում են ստորերկրյա ջրերի վիճակը որոշակի ժամանակահատվածում: Խոշոր մասշտաբի Հ. ք. (1:50000-ից խոշոր) կիրառվում են տեխ. և բանվորական նախագծման փուլերում հատուկ խնդիրների լուծման (ջրաբաշխման տեղամասերի ընտրման, ստորերկրյա ջրերի պաշարների բացահայտման, հանքավայրի ջրառատության ուսումնասիրման, տեղամասի չորացման կամ ոռոգման պայմանների որոշման) համար: Հ. ք. լինում են՝ 1. ընդհանուր, 2. հիմնական ջրաբեր հորիզոնների և 3. հատուկ նպատակային նշանակության: Առանձին տիպ են կազմում հիդրոերկրաբանական շրջանացման, հիդրոքիմիական, ստորերկրյա ջրերի ռեսուրսների քարտեզները: